

ՀՏԴ 371.3

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՁԵՎ
Մինասյան Ա. Ա.

Աշխարհագրական անվանակարգի յուրացման արդյունավետության բարձրացման նպատակով մեր կողմից մշակվել է ուրվագծային քարտեզների կիրառմամբ աշխարհագրական թելադրությունների համակարգ, որի յուրաքանչյուր տեսակը նախատեսված է կիրառել ուսուցման գործընթացի որոշակի փուլում: Թելադրությունների համակարգը հաջողությամբ փորձարկվել է ՀՊՄՀ-ի աշխարհագրության բաժնում և ներառվել ամբիոնի աշխատանքների մեթոդական համակարգում:

Բանալի բառեր. աշխարհագրական անվանակարգ, ուրվագծային քարտեզ, աշխարհագրական թելադրություն, ախտորոշող թելադրություն, ուսուցողական թելադրություն, վարժեցնող թելադրություն, ստուգողական թելադրություն, քարտեզագրական կարողություններ:

Սույն մեթոդական մշակումն ուղղված է սովորողների կողմից աշխարհագրական անվանակարգի յուրացման արդյունավետության բարձրացմանը: Քարտեզի և աշխարհագրական անվանակարգի տիրապետումը աշխարհագրական մշակույթի բաղկացուցիչ մաս է [1]: Քարտեզը համարվում է աշխարհագրության երկրորդ լեզուն, դրա իմացությունը անհրաժեշտ նախապայման է աշխարհագրական գիտելիքների տիրապետման համար: Քարտեզը կատարում է կարևոր հոգեբանամանկավարժական գործառույթ. կազմակերպում է մտածողությունը, նպաստում է գիտելիքների համակարգմանը, հեշտացնում դրանց յուրացումն ու մտապահումը, զարգացնում է երևակայությունը, հիշողությունը, դիտողականությունը, ձևավորում տարածական մտածողություն [2]: Աշխարհագրության ապագա

ուսուցիչը պետք է ազատ տիրապետի անվանակարգի նախատեսված ողջ ծավալին: Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխարհագրության ուսուցման ընթացքում մեծ տեղ է տրվում քարտեզի հետ կազմակերպվող աշխատանքներին, սակայն անվանակարգի յուրացմանը անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում [3]: Հարկ է նշել, որ աշխարհագրական անվանակարգի (աշխարհագրական տեղանունների և եզրույթների ամբողջություն) յուրացումն անհրաժեշտ է ոչ միայն աշխարհագրական կրթության լիարժեք ապահովման համար, այլև ընդհանուր մշակույթի ձևավորման համար: Այն նապաստում է տարբեր էթնոմշակույթների և կրոնների ճանաչմանը, իսկ ջրային օբյեկտների անվանումները պահպանվում են դարերով, հետևաբար, այս անվանումներն ունեն նաև մեծ լեզվապատմական արժեք [2]:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում բացահայտվեցին ուսանողների կողմից քարտեզի և աշխարհագրական անվանակարգի յուրացման ոչ անհրաժեշտ մակարդակ, ինչն էլ ենթադրում է հարցի լուծմանը վերաբերող մոտեցումների վերանայումը մասնագետների կողմից: Այս պարագայում անհրաժեշտ է մշակել մեթոդական այնպիսի մոտեցումներ և լուծումներ, որոնք թույլ կտան ապահովել ուսանողների գիտելիքների ու կարողությունների պատշաճ մակարդակ: Աշխարհագրական անվակարգի յուրացման արդյունավետ եղանակ կարող է հանդիսանալ մշտադիտարկումը «աշխարհագրական թելադրության» միջոցով, որը հնարավոր է իրականացնել բուհում աշխարհագրական յուրաքանչյուր առարկայակարգի շրջանակներում տարբեր մասնագետների կողմից՝ տրամադրելով աշխատանքին նվազագույն ժամանակահատված:


Մեր կողմից մշակվել է աշխարհագրական թելադրությունների համակարգ, որն ուղղված է աշխարհագրական գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, աշխարհագրական անվանակարգի յուրացման ու կիրառման որակի և դրա ստուգման արդյունավետության բարձրացմանը:

Աշխարհագրական թելադրությունները ըստ տեսակի կարող են լինել՝ խոսքային կամ վերբալ, թվային, նշանային կամ սիմվոլային:

1.Խոսքային կամ վերբալ տեսակ. ուրվագծային քարտեզի վրա գրվում է օբյեկտի անվանումը տառերով (նկ. 1):

2.Թվային տեսակ. ուրվագծային քարտեզի վրա նշվում է թելադրվող օբյեկտների հերթական համարները (նկ. 2):


3. **Նշանային կամ սիմվոլային տեսակ.** ուրվագծային քարտեզի վրա նշվում են աշխարհագրական երևույթները համապատասխան պայմանական նշաններով (նկ. 3):



Նկ. 1. Խոսքային կամ վերքալ



Նկ. 2. Թվային



Նկ. 3. Նշանային կամ սիմվոլային

Աշխարհագրական թեալադրությունները, ըստ ուսումնական գործունեության կազմակերպման ձևի, կարող են լինել՝

1. ֆրոնտալ կամ ճակատային,
2. խմբային:

Աշխարհագրական թեալադրությունները, ըստ ուսուցման կազմակերպման ձևի, կարող են լինել՝

1. լսարանային /դասի ընթացքում, նյութի ամրապնդման նպատակով/,
2. արտալսարանային /խորհրդատվությունների ընթացքում, բացթողումների պարզաբանման և քննության նախապատրաստման նպատակով/:

Աշխարհագրական թեալադրությունները, ըստ դիդակտիկական նպատակի, կարող են լինել՝

1. ախտորոշող,
2. ուսուցողական,
3. վարժեցնող,
4. ստուգողական:

Աշխարհագրական թեալադրությունների առաջարկվող տեսակները կատարվում են ուրվագծային քարտեզների հենքի վրա: Թեալադրությունների տևողությունը կարող է տատանվել 5-30 րոպե միջակայքում՝ ելնելով դրա դիդակտիկական նպատակից:

1. Աշխարհագրական **ախտորոշող թեալադրությունը** տրվում է ուսումնական տարվա սկզբին, կազմակերպվում է ֆրոնտալ կամ ճակատային ձևով: Աշխատանքի նպատակն է՝ բացահայտել

ուսանողների առկա գիտելիքների պաշարը աշխարհագրական անվանակարգի վերաբերյալ: Առաջին կուրսի առաջին թելադրությունը բովանդակում է դպրոցական գիտելիքների պաշարը. այն ներառում է 6-12-րդ դասարանների դասընթացներում յուրացված առավել կարևոր տեղանունները: Կարևոր են համարվում այն տեղանունները, որոնց հենքի վրա հետագայում ձևավորվում ու ընդլայնվում են մասնագիտական գիտելիքները: Այս թելադրության բովանդակությունը ճիշտ կազմելու համար անհրաժեշտ է ունենալ աշխարհագրության դպրոցական ծրագրով նախատեսված ողջ աշխարհագրական անվանակարգը: Թելադրության իրականացման մեթոդիկական հետևյալն է. տեղանունները թելադրվում են դասախոսի կողմից, ուսանողները գրանցում են դրանք ուրվագծային քարտեզներում խոսքային կամ վերբալ եղանակով: Աշխատանքին հատկացվող ժամաքանակն է 15-20 րոպե: Երկրորդ կուրսից սկսած մինչև չորրորդ կուրս, ինչպես նաև մագիստրոսական կրթական ծրագրում, ախտորոշող թելադրությունները կրկին կիրառվում են տարեսկզբին: Դրանք բովանդակում են նախորդ տարիների ընթացքում յուրացված անվանակարգը: Թելադրության բովանդակությունը ճիշտ ընտրելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր մասնագիտական առարկայակարգի բովանդակությունից դուրս բերել առկա անվանակարգը, դարձնել միագումար և կազմել թելադրության բովանդակությունը: Թելադրության բովանդակությունում նպատակահարմար է ներառել թվով հարյուր տեղանուն: Այս պարագայում առավել արդյունավետ է կիրառել թելադրության թվային տեսակը՝ ժամանակի նվազագույն ծախսի պայմաններում առավել մեծ քանակությամբ անվանակարգի յուրացվածության մակարդակի ստուգման համար: Ախտորոշող թերադրությունների կիրառումը հնարավորություն է տալիս չափելու և գնահատելու, այսինքն՝ վերահսկելի դարձնելու ուսանողի կողմից աշխարհագրական անվանակարգի յուրացվածության ընդհանուր մակարդակը, պարզելու բացթողումները դրանց հետագա շտկման նպատակով:

2. Աշխարհագրական ուսուցողական թելադրությունը նպատակահարմար է կիրառել ինտերակտիվ դասախոսության և գործնական աշխատանքի ընթացքում: Այն կազմակերպվում է ֆրոնտալ և խմբային ձևերով: Աշխատանքի նպատակն է ամրապնդել նոր յուրացվող տեղանունների մտապահումը: Թելադրության իրականացման մեթոդիկական հետևյալն է՝ ինտերակտիվ դասախոսության ընթացքում, սովորաբար վերջում, դասի ընթացքում ներկայացված տեղանունները

թելադրվում են դասախոսի կողմից, ուսանողները գրառում են դրանք ուրվագծային քարտեզներում խոսքային կամ նշանային եղանակներով: Ուսուցողական թելադրությունը կարող է իրականացվել նաև ուսանողների կողմից: Այս դեպքում ուսանողները դուրս են բերում ներկայացված դասախոսության բովանդակությունից աշխարհագրական անվանակարգը, փոքր խմբով կազմում են թելադրության բովանդակությունը՝ 5-10 տեղանուն, և իրականացնում են ուսուցողական թելադրություն համակուրսեցիների համար: Միայն ուսուցողական թելադրության ընթացքում է թույլատրվում օգտվել աշխարհագրական ատլասից կամ որևէ քարտեզագրական աղբյուրից, որպեսզի սովորողի գիտակցության մեջ տեղանքի անվանումը մտապահվի ճիշտ, առանց աղավաղումների: Թելադրությանը հատկացվող ժամաքանակն է՝ 3-5 րոպե:

3. Աշխարհագրական վարժեցնող թելադրությունը նպատակահարմար է կիրառել լաբորատոր և գործնական աշխատանքների ընթացքում: Այն կազմակերպվում և իրականացվում է սովորողների կողմից փոքր խմբերով: Նպատակահարմար է կիրառել թելադրության բոլոր տեսակները՝ խոսքային կամ վերբալ, թվային և նշանային կամ սիմվոլային: Աշխատանքի նպատակն է անվանակարգի տիրապետումն ու քարտեզագրական կարողությունների յուրացումը հասցնել հմտության մակարդակի: Թելադրության իրականացման մեթոդիկան հետևյալն է՝ ուսանողներին հանձնարարվում է պարբերաբար դուրս բերել էլեկտրոնային տիրույթում ներկայացված դասախոսությունների բովանդակությունից աշխարհագրական անվանակարգը, անհատապես կազմել աշխարհագրական անվանակարգի շտեմարան և խմբային աշխատանքի պայմաններում, միավորելով նյութերը, կազմել և իրականացնել վարժեցնող թելադրություն համակուրսեցիների մասնակցությամբ: Վարժեցնող թելադրության առանձնահատկությունն այն է, որ բովանդակության կազմումը, իրականացումն ու ստուգումը իրականացվում է բացառապես ուսանողների կողմից: Նույն դասաժամի ընթացքում թելադրություն կարող է իրականացնել ուսանողների մեկից ավելի խումբ: Կազմակերպող խմբի ուսանողները գնահատվում են կազմակերպման որակի համար, իսկ ստուգվող ուսանողները՝ ցուցաբերած արդյունքի համար: Աշխատանքին մասնակից ուսանողները կարող են գնահատվել և՛ որպես ստուգող, և՛ որպես ստուգվող: Այս պարագայում ուսանողի վերջնական գնահատականը

գոյանում է միագումարային միջին գնահատականից: Յուրաքանչյուր խմբի աշխատանքին հատկացվող ժամաքանակն է՝ 3-5 րոպե:


Թելադրության այս տեսակների ու ձևերի կիրառման արդյունքում սովորողները լիարժեք կտիրապետեն աշխատանքի կատարման տեխնիկային և կունենան բավարար կարողություններ ու հմտություններ մասնակցելու ստուգողական թելադրությանը:

4. Աշխարհագրական **ստուգողական թելադրությունը** տարբերվում է նախորդներից բովանդակության ծավալով, քանի որ ենթադրում է առարկայում ներառված աշխարհագրական անվանակարգի ողջ ծավալի ստուգում: Նպատակահարմար է կիրառել թելադրության թվային և սիմվոլային տեսակները: Այն կազմակերպվում է միջանկյալ ստուգումներից, ստուգարքներից և ամփոփիչ քննություններից առաջ դասախոսի կողմից ինչպես դասաժամին, այնպես էլ խորհրդատվություններին հատկացվող ժամերին: Ստուգողական թելադրությունը գնահատվում է նախապես ներկայացված չափորոշիչներով: Օրինակ՝ թելադրությունը բաղկացած է հիստուն տեղանունից, յուրաքանչյուրը երկու միավոր արժեքով: Աշխատանքին հատկացվում է 25-30 րոպե:

Թելադրությունների տեսակներն իրենց ուրույն տեղն ունեն ուսուցման գործընթացում, և յուրացման որակի ապահովման համար անհրաժեշտ է կիրառվեն ճիշտ հերթականությամբ:

Աշխարհագրական թելադրությունների կատարման արդյունքում լրացված ուրվագծային քարտեզը կարող է ունենալ հետևյալ տեսքը (նկ. 4):

Մեկամյա մշտադիրկման արդյունքում պարզվեց, որ աշխարհագրական թելադրությունների ողջ համակարգը կիրառելուց հետո, մանկավարժական պրակտիկայի ընթացքում գրանցվում են, համեմատաբար, բարձր արդյունքներ ուսանողների կողմից քարտեզի կիրառման գործում: Նրանք, բանավոր խոսքին զուգահեռ, առավել ազատ են կիրառում աշխարհագրական տեղանունների ցուցադրման հնարը, կազմակերպում դպրոցական աշխարհագրական թելադրություններ, կազմում գործնական առաջադրանքներ դասարանային և տնային աշխատանքների համար: Նշվածից կարելի է հետևել, որ մշակված «աշխարհագրական թելադրությունների համակարգ»-ի կիրառումը նպաստում է աշխարհագրության ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների արդյունավետ ձևավորմանն ու աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացմանը:



Նկ.4. Լրացված ուրվագծային քարտեզ

Աշխարհագրական թելադրությունների ներկայացված համակարգը փորձարկվել է ՀՊՄՀ-ի աշխարհագրության բաժնում և ներառվել «Աշխարհագրության և դրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի ուսումնական գործընթացում՝ որպես ուսուցման կազմակերպման ձև:

ГЕОГРАФИЧЕСКИЙ ДИКТАНТ КАК ФОРМА ЗАКРЕПЛЕНИЯ И ПРОВЕРКИ ЗНАНИЙ

Минасян А. А.

С целью повышения качества усвоения учащимися географической номенклатуры нами разработана система географических диктантов с использованием контурных карт, каждая из которых предусмотрена для применения на определенном этапе учебного процесса. Система диктантов была успешно апробирована на отделении географии АГПУ и включена в методическую систему кафедры.

Ключевые слова: геономенклатура, контурная карта, географический диктант, диагностический диктант, обучающий диктант, тренировочный диктант, контрольный диктант, картографические умения.

GEOGRAPHICAL DICTATION AS A FORM OF CONSOLIDATION AND TESTING OF KNOWLEDGE

Minasyan A. A.

In order to improve the quality of students of learning the geographic nomenclature, we have developed a system of geographic dictations using contour maps, each of which is intended for a certain stage of the teaching process. The system of dictations was successfully tested at the Department of Geography of the ASPU and included in the methodological system of the department.

Keywords: geo-nomenclature, contour map, geographical dictation, diagnostic dictation, learning dictation, training dictation, control dictation, cartographic skills.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Душина И. В., Понурова Г. А. Методика преподавания географии. М: Аркти. 1996. 192 с.
2. Душина И. В. Методика обучения географии в общеобразовательных учреждениях. М: Дрофа. 2007. 510 с.
3. Подгорная Е. А. Приемы изучения географической номенклатуры в рамках подготовки к ЕГЭ// Вестник педагога. 2015. <http://vestnikpedagoga.ru/publikacii/publ?id=862>

Տեղեկություններ հեղինակի մասին

*Մինասյան Ա. Ա. – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ minasyananahit@yandex.ru*

Տրվել է խմբագրություն 20.09.2019